ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՀԱԶԱՆԳԸ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՃԳՆԱԺԱՄԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ճգնաժամից վեց ամիս անց

Ապրիլ 2024

Լուսանկարը՝ ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպություն | Անի Հովհաննիսյանի

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գենդերային այս երկրորդ ահազանգի նպատակն է լուսաբանել հաշմանդամություն ունեցող փախստականների վիճակը ճգնաժամից հետո՝ հաշմանդամություն ունեցող անձանց ներառման և սոցիալական ծառայությունների ոլորտներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպություններից (ՔՀԿ), հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններից և հաշմանդամություն ունեցող փախստական կանանցից հավաքված տեղեկությունների միջոցով:

Մինչ տեղահանումը Ղարաբաղում կար
8,651 **3,134**
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁ

10.2023 թ.-ի տեղահանումից հետո
փախստական բնակչության **16 %**
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ ԵՆ

Այս գենդերային ահազանգի ուշադրության կենտրոնում են տեղահանմանը հաջորդող վեց ամիսների ընթացքում հաշմանդամություն ունեցող կանանց, տղամարդկանց, աղջիկներին և տղաներին մարդասիրական օգնության ցուցաբերման գենդերային հատուկ մարտահրավերներն ու խոչընդոտները:

ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպության և **«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ»** ՀԿ-ի և նրա ցանցի համատեղ իրականացրած այս վարժության նպատակն է պատկերացում տալ հաշմանդամություն ունեցող փախստականների՝ որպես այս ճգնաժամի առավել մարգինալացված խմբերից մեկի առջև ծառացած ներկա վիճակի մասին: Վերլուծությունն իրականացվել է 2024 թվականի մարտին ՔՀԿ-ների և ՀԱԿ-երի հետ հինգ ֆոկուսխմբային քննարկումների, հաշմանդամություն ունեցող փախստական կանանց հետ երկու խորքային հարցազրույցների և մեկ ֆոկուսխմբային քննարկման միջոցով:

1 Սոցիալ-ժողովրդագրական տվյալները Ղարաբաղում, 2020 թ. (կայքը ներկայում անհասանելի է):
2 Հայաստանում Փախստականների կարիքներին արձագանքման ծրագիր, հոկտեմբեր, 2023 թ.:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաթղթային և տեղեկատվական բացեր

- Հաշմանդամություն ունեցող փախստականների առջև ծառացած հիմնական մարտահրավերը **հաշմանդամության վկայականի** և համապատասխան փաստաթղթերի ձեռքբերումն է, քանի որ դրանք պահանջվում են Հայաստանում գտնվելու ընթացքում հաշմանդամության նպաստ ստանալու համար: **Տեղեկատվական բացը** նույնպես նպաստում է այս մարտահրավերներին, քանի որ, ըստ հաշմանդամություն ունեցող փախստականների, դժվար է գործընթացի վերաբերյալ պարզ և հեշտհասկանալի տեղեկություններ գտնել: Շատ հաճախ անհատները աջակցության համար դիմում են ՔՀԿ-ների կամ ՀԱԿ-երի՝ իրենց ծանոթ աշխատակիցներին: Այս ընթացակարգերը կարող են հատկապես վիատեցնող լինել մտավոր հաշմանդամություն ունեցող կամ իրավական համակարգին անծանոթ անձանց համար՝ անհրաժեշտ աջակցություն ստանալու հարցում խոչընդոտներ ստեղծելով:

- **Թվային գրագիտության** պակասը նույնպես մարտահրավեր է, քանի որ շատ գործընթացներ այժմ առցանց են, և հաշմանդամություն ունեցող անձանց համար կարող է դժվար լինել այդ հարթակներում կողմնորոշվելը՝ ներառյալ նույնիսկ **համացանցի հասանելիություն ստանալու** գործընթացը: Ավելին՝ հարթակները միշտ չէ, որ հասանելի և դյուրին են օգտագործման համար, հատկապես կույր անձանց համար, որոնք օգտագործում են էկրանի ընթերցիչներ: Ուստի նրանք պետք է ֆիզիկապես գնան և աջակցություն փնտրեն Միասնական սոցիալական ծառայության կենտրոններից, ինչն ավելի թանկ արժե, քանի որ հանրային տրանսպորտը քիչ հասանելի է:

- 2024 թվականի հունվարից Հայաստանը սկսել է կիրառել **Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգումը՝** բոլոր դիմողների հաշմանդամության կարգավիճակը որոշելու համար: Այս համակարգը տարբերվում է Ղարաբաղում կիրառվողից, որը կենտրոնացած էր բացառապես առողջական վիճակի վրա: Հետևաբար այն փախստականները, որոնք կարիք ունեն հաշմանդամության նպաստների կամ, օրինակ, անձնական օգնականի ծառայության, պետք է գնահատվեն ըստ նոր մոդելի: Այս փոփոխությունը դեռևս պարզ չէ շատերի համար, և փախստականների շրջանում դեռ պետք է վստահություն ձևավորվի համակարգի նկատմամբ: Բացի այդ՝ **հաշմանդամություն ունեցող փախստական բնակչության, ՔՀԿ-ների և ՀԱԿ-երի շրջանում կան մտահոգություններ, որ հաշմանդամության որոշման գործընթացը համարժեքորեն չի գնահատում և՛ փախստական, և՛ հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառացած հատուկ, խաչվող մարտահրավերները:**

«Ես կույր եմ, բայց 37 տարի ուսուցիչ եմ եղել: Ես իսկապես ցանկանում եմ շարունակել աշխատել իմ մասնագիտությամբ այստեղ՝ աջակցելու տեսողության խնդիրներ ունեցող երեխաներին, ուստի անցա ֆունկցիոնալության գնահատման գործընթացը, որպեսզի կարողանամ օգտվել անձնական օգնականի ծառայությունից, որն ինձ կօգնի կրկին գտնելու ուսուցչի աշխատանք: Սակայն գործընթացն այնքան երկար տևեց և այնքան բարդ ու ծախսատար էր հատկապես ինձ համար, որ առաջին անգամ էի [ժամանել] Երևան: Ես դեռ վստահ չեմ՝ արդյոք իրավունակ եմ ստանալու այս աջակցությունը, բայց պետք է սկսեմ աշխատել, որպեսզի վճարեմ տան վարձը և այստեղ ապրելու ծախսերը»:

— Հաշմանդամություն ունեցող փախստական կին (57 տարեկան)

- Հաշմանդամության նպաստի ձևով աջակցության մակարդակը կախված է փախստականի ստացած հաշմանդամության կատեգորիայից: Օրինակ՝ հաշմանդամության երրորդ խումբ

(այսինքն՝ նոր համակարգով ֆունկցիոնալության սահմանափակման միջին աստիճան) ունեցող անձանց ֆինանսական աջակցությունը ամսական 36,000 դրամ է: Այնուամենայնիվ, **այս գումարը բավարար չէ հաշմանդամությանն առնչվող բոլոր հավելյալ, այդ թվում՝ տրանսպորտի կամ կապի ծախսերի համար:** Կարևոր է նաև նշել, որ այս գումարն ավելի քիչ է, քան տրամադրվել է Ղարաբաղում, ինչը դժվարացնում է անձանց համար հաշմանդամության ծախսերի առնչությամբ իրենց ֆինանսների տնօրինումը:

Ծառայությունների մատչելիություն

- Միասնական սոցիալական ծառայությունների կենտրոնների, տեղեկությունների **սահմանափակ հասանելիությունը**, **տրանսպորտային ոլորտում առկա անհավասարությունները**, **հաշմանդամության նպաստների նոր համակարգի** գործարկումը և **սոցիալական ցանցերի բացակայությունը** դեռևս հիմնական խոչընդոտներն են հաշմանդամություն ունեցող անձանց՝ **և՛ Հայաստանի քաղաքացիների, և՛ փախստականների համար:** Հատկապես Երևանում հանրային տրանսպորտի համակարգը դարձել է ավելի մատչելի, սակայն այն դեռ համընդգրկուն չէ: Հետևաբար հաշմանդամություն ունեցող, հատկապես ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ կարիք ունեն տաքսիների՝ վերականգնողական, սոցիալական ծառայությունների կենտրոններ, կլինիկաներ, շուկաներ և դպրոցներ այցելելու համար, ինչը պահանջում է ավելի մեծ ծախսեր՝ համեմատած հասարակական ավտոբուսներից կամ գնացքներից օգտվելու ծախսերի հետ: Մասնավորապես, անվասայլակների համար մատչելի տաքսի ծառայությունները Երևանում կարող են մինչև տասնհինգ անգամ ավելի թանկ լինել, քան սովորական տաքսի ծառայությունները:

- Մասնագիտացված, մասնավորապես վերականգնողական ծառայությունները Հայաստանում հաշմանդամություն ունեցող փախստականների համար այնքան էլ հեշտհասանելի չեն, ինչպես Ղարաբաղում էր: **Մասնագիտացված և անհատականացված ծառայությունների բացակայությունը մեծացնում է այս փախստականների կախվածությունը իրենց ընտանիքներից՝** այդպիսով նվազեցնելով նրանց անկախ կյանքի հնարավորությունները: Ավելին՝ փախստականներին տրամադրվող աջակցող սարքերի ցանկը, ինչպես մյուս քաղաքացիների համար, սահմանափակ է և չի ներառում հաշմանդամության էլեկտրական սայլակները:

- **Հաշմանդամություն ունեցող փախստականների համար խիստ անհրաժեշտ մատչելի կացարաններ Հայաստանում գրեթե չկան:** Դժվար է գտնել վարձակալությամբ բնակարաններ, որոնք կահավորված են թեքահարթակներով, բազրիքներով և այլ հարմարություններով, ինչը հաշմանդամություն ունեցող շատ փախստականների թողնում է այնպիսի կենսապայմաններում, որոնք պատշաճ կերպով չեն բավարարում նրանց կարիքները և փոխարենը սահմանափակում են նրանց անկախությունը: Ավելին՝ մատչելի բնակարանների սակավությունը բարձրացնում է ինստիտուցիոնալացման վտանգը՝ ավելի սահմանափակելով նրանց անկախությունը և համայնքին ինտեգրումը: Փախստականները մտահոգություններ ունեն բնակարանային ծրագրերի առնչությամբ՝ անհանգստանալով, որ այլընտրանք չեն ունենա և ստիպված են ընտրել իրենց հաշմանդամության հիման վրա առանձնացված սոցիալական բնակարանային տարբերակներ՝ ի տարբերություն հաշմանդամություն չունեցող անձանց:

- Հաշմանդամություն ունեցող երեխաների վրա բացասաբար են ազդում այս մարտահրավերները, քանի որ ծնողները կարող են չուղարկել նրանց դպրոց կամ զբաղվել այլ գործունեությամբ՝ մասամբ ծախսերի և մատչելի դպրոցների բացակայության պատճառով, որոնք կարող են բավարարել հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքները: Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող կազմակերպության հետ ֆոկուսխմբային քննար-

կումը ցույց տվեց, որ հաշմանդամություն ունեցող **փախստական աղջիկները, ամենայն հավանականությամբ, կդադարեցնեն իրենց ուսումնառությունը տեղահանվելուց հետո՝ տրանսպորտի ծախսերի, ինչպես նաև հանրային վայրերում նրանց անվտանգության առնչությամբ ծնողների մտահոգության պատճառով:**

- Հաշմանդամություն ունեցող փախստական երեխաների ծնողները նախընտրում են մնալ Երևանում՝ իրենց երեխաների համար հասանելի մասնագիտացված կենտրոնների և ծառայությունների առկայության պատճառով: Սակայն մայրաքաղաքում վարձավճարն ու կացության ծախսերն ավելի բարձր են, քան մարզերում. այս պատճառով որոշ ծնողներ մտածում են Երևանից հեռանալու մասին: Այս որոշումը կարող է բացասաբար անդրադառնալ երեխաների, հատկապես աուտիզմ ունեցող երեխաների վրա, քանի որ նրանք կարող են հարկադրված մնալ տանը՝ չօգտվելով ծառայություններից, ինչը կարող է վատթարացնել նրանց կյանքի որակը:

- **Ղարաբաղում անկախ կյանքով ապրող հաշմանդամություն ունեցող անձանց կամ տարեցների ինստիտուցիոնալացման հիմնահարցը դեռևս մտահոգիչ է:** Չնայած Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայում շարադրված սկզբունքներին՝ Հայաստանը դեռևս պետք է ավարտին հասցնի իր ապաինստիտուցիոնալացման ծրագիրը, որը մեկնարկել է 2019 թվականին: Պետք է ջանքեր գործադրվեն վերջնականացնելու համայնքահենք ծառայությունների ստեղծումը, որոնք աջակցում են անկախությանը և դյուրացնում անցումը ինստիտուցիոնալ միջավայրից համայնքահենք կենսամիջավայրի՝ իրենց իրավունքներին և նախասիրություններին համապատասխան:

Սոցիալական նորմեր

- **Հաշմանդամություն ունեցող փախստական կանայք, եթե ամուսնացած չեն, հիմնականում ապրում են իրենց ընտանիքների հետ,** քանի որ նրանց ծնողները կարծում են, որ **իրենց անվտանգության նկատառումներով** նրանք պետք է մոտ լինեն ազգականներին: Սա հանգեցնում է **սոցիալական շփումների բացակայության, կրթական կամ մասնագիտական հնարավորություններում սահմանափակ ներգրավվածության և սահմանափակ շարժունության,** քանի որ նրանց ընտանիքի անդամները հաճախ կարիք ունեն ուղեկցելու նրանց և որոշումներ կայացնելու նրանց փոխարեն: Հաղորդվում է, որ այս իրավիճակը եղել է տեղահանությունից առաջ և սրվել է նոր միջավայրի և դրանում բազմաթիվ անորոշությունների պատճառով:

- Տեղահանմանը հաջորդող **բազմաթիվ խոչընդոտների** հետևանքով, ինչպիսիք են տրանսպորտը, անվտանգության մասին պատկերացումները, երեխաներին աջակցելու հնարավորություններ ունեցող դպրոցների սակավությունը, լեզվական և մշակութային տարբերությունները և հաշմանդամության հիմքով խտրականության ենթարկվելու վախը, **հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները նախընտրում են երեխաներին պահել տանը և իրենք նրանց մասին հոգ տանել:** Այսպիսով՝ ՔՀԿ-ները պարզել են, որ կան հաշմանդամություն ունեցող զգալի թվով երեխաներ և դեռահասներ, որոնք դպրոց չեն հաճախում: Պետք է փոխել ծնողների գիտակցությունն ու վերաբերմունքը, քանի որ հաշմանդամություն ունեցող երեխաները հասարակության մաս են և ունեն կրթության և զարգացման իրավունք:

- Հաշմանդամություն ունեցող փախստականներին աջակցող տեղական ՔՀԿ-ները հայտնել են, որ **հաշմանդամություն ունեցող տղամարդիկ ավելի քիչ աջակցություն են փնտրում հաշմանդամություն ունեցող կանանց համեմատ:** Բացի այդ՝ ավելի հաճախ կանայք դիմում են ՔՀԿ-ներին հաշմանդամությանն առնչվող խնդիրների պատճառով օգնության կարիք ունեցող իրենց տղամարդ հարազատների անունից: Սակայն, կարծես թե, այժմ հակամարտության հետևանքով փաստացի ավելի շատ են հաշմանդամություն ունեցող տղամարդիկ:

- Հարցազրույցների ժամանակ փախստական կանայք ասացին, որ **տղամարդիկ հաճախ դժվարանում են ընդունել իրենց հաշմանդամությունը և ուրիշների աջակցության կարիքը՝** պայմանավորված **գենդերային ավանդական նորմերով,** որոնք իրենց դիրքավորում են **որպես ընտանիքի և համայնքի առաջնորդների**: Հետևաբար հաշմանդամություն ձեռք բերած բոլոր անձինք ունեն կարիք **հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության,** որը հաշվի է առնում **գենդերային առանձնահատկությունները** և հիմնված է հաշմանդամության մարդու իրավունքների մոտեցման վրա:

- ՔՀԿ-ների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ հարցազրույցներում **հաղորդվել է, որ հաշմանդամություն ունեցող, հատկապես մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ խտրականությունը** էական մարտահրավեր է Հայաստանում: **Մտավոր հաշմանդամություն ունեցող կանայք բռնության, շահագործման և սեռական ոտնձգության ավելի բարձր ռիսկի են ենթարկվում:**

«Եթե տղամարդը հաշմանդամություն ունի, կինը պետք է հոգ տանի նրա համար և ավելի շատ աշխատանք կատարի՝ գումար վաստակելու և տան հոգսերը հոգալու համար»:

— Հաշմանդամություններ ունեցող փախստական կին (44 տարեկան)

- **Հաշմանդամություն ունեցող փախստականների առողջական վիճակը երբեմն անտեսվում է ֆինանսական աջակցության բացակայության պատճառով:** Շատ կարևոր է տարբեր պետական ծրագրերի միջոցով առաջնահերթությունը տալ այդ անձանց ընդհանուր առողջությանը՝ ապահովելով նրանց անհրաժեշտ բժշկական օգնության և բուժման հասանելիությունը: Ավելին՝ հատուկ ուշադրություն պետք է դարձնել հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական և սեռական առողջությանը, որոնք հաճախ բարեկեցության անտեսված ասպեկտներ են:

- **Սոցիալական մեկուսացումը տարածված խնդիր է խուլ փախստականների համար,** որոնք դժվարությամբ են ներգրավվում համայնքային գործունեությանը մատչելի **տեղեկատվության բացակայության պատճառով:** Այս մեկուսացումը կարող է նրանց մեջ առաջացնել միայնության և մերժվածության զգացումներ՝ ազդելով նրանց հոգեկան բարեկեցության վրա: Բացի այդ՝ անհրաժեշտ է ջանքեր գործադրել ժեստերի լեզվով թարգմանություն տրամադրելու համար՝ հաշվի առնելով մշակութային առանձնահատկությունները, ապահովելով, որ խուլ փախստականները լիովին ներգրավվեն և օգտվեն տարիքին համապատասխան աջակցությունից և ծառայություններից, որոնք հասանելի են կանանց, փախստականներին և հաշմանդամություն ունեցող անձանց:

Զբաղվածության հնարավորությունների հասանելիություն

- **Հաշմանդամություն ունեցող փախստականների մեծ մասը գործազուրկ է և մինչ տեղահանումը ստացել է աջակցություն պետական նպաստների ձևով:** Քանի որ Հայաստանում հաշմանդամության նպաստն ավելի քիչ է, քան նախկին միջավայրում, հաշմանդամություն ունեցող շատ փախստականներ պետք է փնտրեն աշխատանք կամ ապրուստի միջոցներ, որոնք կարող են ֆինանսական աջակցություն ցուցաբերել նրանց բնակեցման համար: Հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավելու վերաբերյալ գործատուների և ընկերությունների շրջանում ըմբռնման բացակայությունը հիմնական խոչընդոտն է նրանց աշխատուժում ընդգրկելու համար:

- ՔՀԿ-ների հետ հարցազրույցները ցույց տվեցին, որ փախստական տղամարդիկ, որոնք ունեն հաշմանդամության նույն կարգավիճակը, ինչ փախստական կանայք, ավելի հավանական է, որ աշխատանք ստանան և ներառվեն հասարակությանը: **Այս անհամա-**

պատասխանությունը կարող է առաջանալ գերակշռող ընկալումներից և կարծրատիպերից, որոնք հաշմանդամություն ունեցող կանանց համարում են ավելի պակաս կարող:

- **Հաշմանդամություն ունեցող որոշ փախստականներ, որոնք մինչ ճգնաժամը աշխատանք ունեին, ցանկություն են հայտնել շարունակելու աշխատել Հայաստանում:** Հարցազրույցներից պարզվել է, որ երիտասարդ խուլ փախստական մի կին աշխատում է հայկական ՀԱԿ-երից մեկում: Սա վկայում է այն մասին, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար կան հնարավորություններ, սակայն անհրաժեշտ է նաև աջակցել համապատասխան աշխատանքի որոնման հարցում:

Մասնակցություն որոշումների կայացման գործընթացներին

- Շատ մարզերում դեռևս բավարարված չեն հաշմանդամություն ունեցող փախստականների կարիքները: **Այս մարգինալացված խմբերի ձայնը պետք է լսելի լինի:** ՔՀԿ-ները և ՀԱԿ-երը աշխատում են իրենց սահմանափակ ռեսուրսներով՝ աջակցելու և՛ փախստականներին, և՛ տեղի բնակչությանը սոցիալական համախմբվածություն ապահովելու համար, սակայն բացերը դեռևս զգալի են:

- Ըստ ՔՀԿ-ների՝ **Հայաստանում նկատելի է հաշմանդամության առումով ներառական և հաշմանդամությանը հատուկ միջազգային համագործակցության պակաս:** Համագործակցության բացակայությունը հանգեցնում է հաշմանդամություն ունեցող փախստականների կարիքները հոգալու հատվածային մոտեցմանը և սահմանափակում միջազգային ջանքերի արդյունավետությունը:

- **Հաշմանդամություն ունեցող փախստականները՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող աղջիկներն ու կանայք, հաճախ հանդիպում են խոչընդոտների իրենց վրա ազդող որոշումների կայացման գործընթացներին մասնակցելու հարցում:** Հաշմանդամություն ունեցող փախստականների կողմից ղեկավարվող ՀԱԿ-երի, նախաձեռնությունների և նման այլ կազմակերպությունների գործունեության խրախուսումը և աջակցությունը կարող են երաշխավորել, որ փախստականների շրջանում հաշմանդամություն ունեցող անձինք որոշումների կայացման գործընթացում ունենան ձայնի իրավունք: